




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



COVID-19-ի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և PwC Արմենիայի կողմից իրականացվող համատեղ հարցում

**Ֆինանսական տնօրենները և ղեկավարները
նախատեսում են վճռական գործողություններ և
երկարաժամկետ փոփոխություններ բիզնեսի
վերագործարկման ծրագրերում**

PwC-ն հետևում է COVID-19-ով պայմանավորված համավարակի բռնկման արդյունքում ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում ձևավորված տրամադրություններին և առաջնահերթություններին: Ապրիլի 20-ին հաջորդող շաբաթվա ընթացքում մենք հարցում ենք իրականացրել 24 երկրների ընկերությունների 871 ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում: Այս հարցումը թվով երկրորդն է: Հարցմանը մասնակցել են նաև Հայաստանյան ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները, և նրանցից ստացված պատասխաններն ամփոփված են սույն զեկույցում:



ՀՀ կառավարությունն արձագանքում է COVID-19-ին


Հայաստանի կառավարությունը մարտի 16-ին հայտարարեց արտակարգ դրություն և ընդունեց խստագույն խափանման միջոցներ՝ ներառյալ դպրոցների փակում և բարձր ռիսկային երկրներից օտարերկրյա քաղաքացիների համար ՀՀ ժամանման արգելք, ինչպես նաև սահմանվեց տուգանք՝ արտակարգ դրության ժամանակ մեկուսացման կանոնները խախտելու համար: Արտակարգ դրությունը երկարաձգվեց մինչև մայիսի 14-ը և ներառեց տեղաշարժման սահմանափակումները: Սակայն, մայիսի 4-ից Հայաստանի կառավարությունը հետզհետե մեղմեց սահմանափակումները՝ թույլ տալով, որ որոշ ձեռնարկություններ վերադառնան բնականոն գործընթացին՝ միաժամանակ ձեռնարկելով անվտանգության միջոցներ՝ կանխելու COVID-19-ի տարածումը: Այս միջոցների չպահպանումը կարող է հանգեցնել իրավական պատասխանատվության: Կառավարությունը հայտարարեց 300 միլիոն ԱՄՆ դոլարի օգնության փաթեթի մասին (ՀՆԱ-ի 2 տոկոսը)՝ համաճարակի հետ կապված սոցիալ-տնտեսական խնդիրները մեղմելու համար, չնայած սա ներառում է մի շարք ուղղակի ծախսեր, պետության կողմից հովանավորվող վարկեր և ներդրումների ավելացում:



Ֆինանսական տնօրենները և ղեկավարները արձագանքում են COVID-19-ի զարգացումներին

Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ շատ ընկերություններ դուրս են եկել կորոնավիրուսային հիվանդության նոր համաճարակի նկատմամբ իրենց արձագանքների կարճաժամկետ, ռեակտիվ փուլից: Առաջին փուլում ընկերությունները մոբիլիզացրել են իրենց ծրագրերն առաջնահերթ խնդիրների լուծումն համար, ինչպիսիք են՝ աշխատողների առողջությունն ու բարեկեցությունը: Այսօր նրանք դեռ պետք է անեն անհրաժեշտ ամեն ինչ՝ աշխատողների անվտանգության և բիզնեսի պահպանման համար: Միևնույն ժամանակ, նրանք պետք է մտածեն, թե ինչպես կայունացնել իրենց գործունեությունը և ինչպիսի տակտիկական միջոցներ է հարկավոր ձեռնարկել, որոնց իրականացումը թույլ կտա նրանց պատրաստվել «նոր նորմալ» աշխատանքին:


Վերոնշյալ միջոցները կիրառվում են ամբողջ աշխարհում կորոնավիրուսային հիվանդության դինամիկ տարածման հետևանքով: ԵՄ-ի շատ երկրներ այժմ անցել են հիվանդության փոխանցման առաջին ալիքի գագաթնակետին, իսկ եվրոպական մի շարք երկրներ, ներառյալ՝ Չեխիան, Դանիան, Գերմանիան և Իսպանիան, սկսել են մեղմել սահմանափակումները: Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում կորոնավիրուսային հիվանդությունը, զուգորդվելով նավթի գների անկայունության հետ, հանգեցրել են ԱՄՆ-ի կողմից 2020 թ.-ի համար 3.3% տնտեսական անկման կանխատեսման: ԱՄՆ-ի Կոնգրեսում ընդունվել է 484 միլիարդ դոլար արժողությամբ կորոնավիրուսային հիվանդության օգնության փաթեթ՝ փոքր բիզնեսին և հիվանդանոցներին աջակցություն ցուցաբերելու համար, մինչդեռ Կոնգրեսի բյուջետային գերատեսչությունը կանխատեսել է, որ 2020 ֆինանսական տարում դաշնային բյուջեի դեֆիցիտը կհասնի 3,7 տրիլիոն ԱՄՆ դոլարի: Ճապոնիան հայտարարել է արտակարգ դրություն երկրի ամբողջ տարածքում և նախատեսում է 100,000 ճապոնական իեն (930 ԱՄՆ դոլար) տրամադրել բոլոր քաղաքացիներին:



Հայաստանյան ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում իրականացված հարցման վերլուծության սահմանափակումներ

Սույն հարցման մեջ կիրառվող մեթոդաբանությունը սահմանում է, որ յուրաքանչյուր տարածաշրջանից հարցվածների որոշակի քանակ պետք է մասնակցի (ընդհանուր առմամբ, առնվազն 30): Զանի որ Հայաստանից ստացված պատասխանների թիվը 30-ից ցածր է, մենք ներկայացնում ենք Հայաստանյան ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների պատասխանները որպես ցուցանիշ և կարծիք, այլ ոչ թե որպես վիճակագրորեն հավաստի տվյալներ: Հարցման զեկույցից օգտվողները պետք է հաշվի առնեն, որ եթե հարցվածների թիվն ավելի բարձր լիներ, ապա մենք կունենայինք այլ արդյունքներ:


Հարց 1: Ո՞րն է ձեր ընկերության մտահոգության ներկայիս մակարդակը COVID-19-ի հետ կապված:




Ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում իրականացված հարցման արդյունքներում մենք տեսնում ենք իրավիճակի բարդությունը: Ֆինանսական տնօրենները և ղեկավարներն անհանգստացած են. նրանք, ովքեր հայտնում են, որ կորոնավիրուսային հիվանդությունն ունի էական ազդեցություն բիզնեսի վրա, ընդհանուր պատասխանների 70%-ն է, սա մոտավորապես նույնն է, ինչ մեր նախորդ հետազոտության արդյունքը: Սակայն, որոշ երկրներում մեծ անհանգստություն ունեցողների տոկոսն այժմ ավելի քիչ է, քան 50%-ը:



Հարց 3: Հետևյալ ֆինանսական գործողություններից որո՞նք են ձեռնարկվելու ձեր ընկերության կողմից COVID-19-ի արդյունքում:



Հայաստանից հարցվածներից ավելի քան 20-ը համաձայնել են, որ COVID-19-ը կարող է ազդեցություն ունենալ իրենց բիզնեսի վրա (55%): Հարցվածների մեծամասնությունը դեռևս քննարկում է ծախսերի կրճատման միջոցները, բայց նրանք նաև պլանավորում են տարբեր գործողություններ՝ աշխատանքային պայմանների, մատակարարման ցանցերի և ներդրումների շուրջ, որոնք հետաճանաչման աշխարհում իրենց ընկերությունները կդարձնեն առավել ուժեղ և պատրաստված՝ հետագա ճգնաժամերին դիմակայելու համար: Հայաստանում ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները հիմնականում քննարկում են ֆինանսական գործողությունների վերանայումը (50%):



Հարց 12Բ: Հետևյալներից ո՞րն եք նախատեսում իրականացնել բնականոն աշխատանքի վերադարձից հետո:




Ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները փնտրում են աղբյուրների այլընտրանքային տարբերակներ (52%) և փորձում են հասկանալ իրենց մատակարարների ֆինանսական և գործառնական առողջությունը (50%): Հայաստանում հարցվածների 60%-ը նախատեսում է մշակել լրացուցիչ, աշխատանքներն իրականացնելու այլընտրանքային աղբյուր: Եվս 34%-ը նախատեսում է ավելի լավ պատկերացում կազմել իրենց մատակարարների ցանցերի մասին:

Ֆինանսական տնօրենների և ղեկավարների մի հատվածը (49%) կարծում է, որ հնարավոր է վերադառնալ բնականոն աշխատանքի երեք ամսվա ընթացքում, եթե կորոնավիրուսային հիվանդության համաճարակն ավարտվի այսօր, մինչդեռ հարցվածների 70%-ը մեծապես մտահոգված է բիզնեսի վրա ճգնաժամի էական ազդեցությունով:

Բիզնեսի կայունացման գործում էական նշանակություն ունի գրասենյակների, գործարանների և այլ հիմնարկների վերաբացումը: Բնականաբար հնարավոր չէ պարզապես բացել դռները: Այդ իսկ պատճառով ընկերության ղեկավարները որոշում են, թե ինչպես լավագույնս պաշտպանել իրենց աշխատակիցներին և հաճախորդներին: Պաշտպանության հիմնական երկու միջոցները ներառում են աշխատատեղի անվտանգության միջոցառումների և պահանջների փոփոխություն (64%) և աշխատանքային պայմանների վերակազմավորում՝ ֆիզիկական հեռավորության ապահովման համար (55%): Հայաստանում այդ միջոցառումներն իրականացնելու վերաբերյալ հարցվածները պատասխանել են, համապատասխանաբար, 70% և 20%: Հարցվածների շուրջ 40%-ը պատրաստվում է դիտարկել նոր գործիքներ, որոնք թույլ են տալիս հետևել անձնակազմի գտնվելու վայրին, ինչպես նաև որոշել, թե ում հետ է շփվել կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված մարդը: Տարբեր երկրներում տարբեր կերպ են վերաբերում նշված միջոցառումներին:

Օրինակ ԱՄՆ-ում ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների 77%-ի համար անվտանգության ապահովման միջոցները մտնում են առաջնահերթ խնդիրների եռյակի մեջ, մինչդեռ Շվեյցարիայում՝ 33%-ի համար:




Ըստ ոլորտների պատկերը հետևյալն է. Էլեկտրաէներգետիկայի, կոմունալ և հանքարդյունաբերության ոլորտներում ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարներն ամենայն հավանականությամբ կիրականացնեն անվտանգության միջոցառումներ (հարցվածների 70%-ը), իսկ բարձր տեխնոլոգիաների, ՉԼՄ-ների և հեռահաղորդակցության ոլորտում ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները հավանաբար կդիտարկեն իրենց վարձակալվող տարածքների նվազումը (հարցվածների 41%-ը, ինչը գերազանցում է այդ տարբերակը նշած հարցման մասնակիցների միջին ցուցանիշը): Ընկերության ֆինանսական տնօրենները և ղեկավարները նաև գնահատում են տեխնոլոգիական լուծումների օգտագործման հնարավորությունը, որոնք թույլ են տալիս հեշտացնել արտադրական հարթակներում աշխատանքի վերադարձը: Ընդհանուր առմամբ, հարցվածների 46%-ը հավաստիացնում է, որ արագացնելու են ավտոմատացման և այլ նոր մեթոդների ներդրումը: Գերմանիայում և Մեքսիկայում հարցվածների առնվազն 60%-ը նշում է ավտոմատացումը և հեռավար աշխատանքը լավագույն երեք որոշումների շարքում են: Հեռավար աշխատանքը դիտարկվում է նաև ֆինանսական ոլորտում՝ հարցվածների 56%-ը: Ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների ևս 21%-ը վերլուծում է այն գործիքները, որոնք թույլ են տալիս որոշել, թե ում հետ է շփվել կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված մարդը, ինչպես նաև նրա գտնվելու վայրը (գեոլոկացիան): Հայաստանում այս միջոցը երկրորդ տեղն է զբաղեցնում առաջնային գործողությունների շարքում, որոնք ընկերությունները պատրաստվում են ձեռնարկել բնականոն աշխատանքին վերադառնալիս (40%): Այս միջոցառումները չափազանց կարևոր են, բայց դրանց իրականացումը բարդ խնդիր է, քանի որ գաղտնիության պահպանման հարցեր են առաջանում: Երկրների կառավարությունները, հնարավոր է, դժվարություններ ունենան քաղաքացիների շրջանում նման գործիքները հարկադրաբար օգտագործելու փորձի ժամանակ, և արդյունքում ընկերությունները հնարավորություն կունենան (կամ գուցե նույնիսկ պարտականություն) մշակել տեխնոլոգիաներ բացը վերացնելու համար: Չնայած նրան, որ կազմակերպությունները քննարկում են անվտանգության միջոցները, որոնք թույլ են տալիս աշխատակիցներին վերադառնալ աշխատատեղեր, հարցվածների 20%-ը մտահոգված է կարևոր աշխատանքների կատարման համար անձնակազմի պակասով: Հարցվածների միայն 7%-ն է հաստատել, որ դիտարկում է նպատակային արտոնությունների տրամադրումը, ինչպիսիք են աշխատանքի վայրում մանկապարտեզների կազմակերպումը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դպրոցական և նախադպրոցական հաստատություններ փակ են մնում ամբողջ աշխարհում, աշխատակիցները դժվարություններ կունենան իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, եթե աշխատավայրերն ավելի շուտ բացվեն:

Ճանաչեք ձեր մատակարարներին և ձեր ռիսկը

Ճգնաժամի ընթացքում կազմակերպության կայունացման մեկ այլ կարևորագույն պայմանն է մատակարարման արդյունավետ շղթայի ապահովումը: Երբ խոսքը վերաբերում է մատակարարման շղթայի հետ կապված հարցերին, հարցման մասնակիցների մոտավորապես կեսն առաջնային խնդիրների թվում նշում է սորսինգի այլընտրանքային տարբերակների մշակումը (52%) և մատակարարների ֆինանսական և գործառնական վիճակի ըմբռնումը (50%): Գերմանիայից հարցման մասնակիցները (54%), ամենայն հավանականությամբ, շեշտը դրվելու են մատակարարների ցանցերի մասին ավելի ամբողջական տեղեկատվություն ստանալու վրա՝ ռիսկերի գնահատման և սցենարային պլանավորման նպատակով: Վերոնշյալը, ինչպես նաև ճկունության բարձրացումը կօգնի ապահովել ընկերությունների կայունությունը: Շվեյցարիայում (50%) և Պորտուգալիայում (47%) հարցվածները նշել են ռիսկերի պաշտպանության միջոցների արդյունավետության բարձրացում, ընդ որում, այդ արժեքները գերազանցում են այդ տարբերակը նշած հարցման մասնակիցների շրջանում միջին ցուցանիշը:

Չարք 7Բ: COVID-19-ի արդյունքում մտածո՞ւմ եք վերանայել ձեր մատակարարման շղթան (supply chain), օրինակ՝ մատակարարներին, շուկաները, լոգիստիկան: Խնդրում ենք ընտրել երեք առավել արդիական ոլորտները:



Հայաստանում հարցվածների համար ամենաարդիական ուղղություններն են սորսինգի լոգիստիկայի այլընտրանքային տարբերակների մշակումը (60%) և իրենց մատակարարների ցանցերի մասին ավելի ամբողջական տեղեկատվություն ստանալը (40%):

Հարցման մասնակից ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների կարծիքն առաջնահերթ խնդիրների վերաբերյալ համընկնում է երկրի ընդհանուր կարծիքի հետ, բայց էլեկտրաէներգետիկայի, կոմունալ տնտեսության և հանքարդյունաբերության, ինչպես նաև արդյունաբերական արտադրության և ավտոարդյունաբերության ոլորտի ընկերությունների համար առաջնահերթ է հասկանալ իրենց մատակարարների վիճակը (համապատասխանաբար 60% և 58%): Առողջապահության ոլորտի (40%) և մանրածախ և սպառողական հատվածի ղեկավարները (36%) նախատեսում են ավելի լայնորեն օգտագործել սպառողների վարքագծի հետ կապված գործիքները, ընդ որում նշված արժեքները գերազանցում են պատասխանի այս տարբերակն ընտրած հարցվածների միջին ցուցանիշը: Այլ ոլորտների համեմատ ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարներն առավել շատ նախատեսում են ավտոմատացման օգտագործումը որոշումների կայացման գործընթացի արդյունավետության բարձրացման համար (40%):

Ընդհանուր առմամբ, մատակարարման ցանց ունեցող կազմակերպությունները, որոնք որոնք բնութագրվում են ինտեգրման բարձր մակարդակով (ինչպես ներքին մատակարարների, այնպես էլ արտաքին), պետք է ավելի լավ պատրաստված լինեն սորսինգի այլընտրանքային տարբերակներին կամ մատակարարների համար թափանցիկության բարձրացմանը: Այսպիսի բնութագրիչներին համապատասխանող ընկերությունները իրենց գործընթացների շրջանակներում արդեն ավտոմատացրել են մատակարարման շղթան ու որոշումների կայացումը, ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ արտաքին գործընկերների հետ: Այնուամենայնիվ, ինչպես նշվում է PwC-ի կողմից վերջերս հրապարակված՝ «Միացված և ինքնավար մատակարարման շղթաների Էկոհամակարգերը 2025 թ. -ին» զեկույցում, հարցված ընկերությունների միայն 36%-ն է գործում ինտեգրման այս մակարդակում (ցուցանիշն ավելանում է 81%, այսպես կոչված «թվային չեմպիոնների» շարքում ընկերություններ, որոնք առաջատար դիրքեր են զբաղեցնում մատակարարման շղթայի արդյունավետության չափանիշով):




Ֆինանսական տնօրենները և ղեկավարները պատրաստվում են վերադառնալ բնականոն գործունեության

Հարցվածների կեսը (49%) գտնում է, որ եթե ճգնաժամն ավարտվեր այսօր, իրենց կազմակերպությունը կվերադառնար բնականոն գործունեության երեք ամսվա ընթացքում: Այս ցուցանիշը փոքր-ինչ բարձր է (56%) համեմատած երկու շաբաթ առաջ իրականացված հարցման արդյունքներին: Ղեկավարներն ակնկալում են դրական հեռանկարներ, քանի որ իրենց ընկերություններն ունենին բավարար ներուժ դիմակայելու ստեղծված իրավիճակին: Հայաստանում հարցվածների մոտ կեսը (45%) պատասխանել է, որ կպահանջվի մեկից երեք ամիս՝ բնականոն գործունեությանը վերադառնալու համար:

Այս հարցի պատասխանների վերլուծությունն ըստ ոլորտների ցույց է տալիս, որ հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ բնականոն գործունեությանը վերադառնալը կտևի ոչ ավելի, քան երեք ամիս: Էլեկտրաէներգետիկայի, կոմունալ և հանքարդյունաբերության ընկերությունների ղեկավարները (62%), առողջապահական ոլորտի ղեկավարները (54%), մանրածախ առևտրի և սպառողական ապրանքների արտադրության ոլորտի ղեկավարները (51%):


Հարց 8: Եթե COVID-19-ն ավարտվեր շուտով, որքա՞ն ժամանակ կպահանջվեր ձեր ընկերությունից բնականոն գործունեության վերադառնալու համար:



Ճգնաժամն այսօր չի ավարտվում, և մենք տեսնում ենք, որ նույնիսկ այն երկրներում, որոնք, ըստ ամենայնի, պատրաստ են թուլացնել սահմանափակումները (օրինակ՝ Սինգապուրը), հնարավոր է կորոնավիրուսային հիվանդության նոր ալիք: Բոլոր երկրների կառավարությունները մեծ ջանքեր են գործադրում քաղաքացիների անվտանգության ապահովման և տնտեսության գործարկման միջև օպտիմալ հավասարակշռություն գտնելու համար: Ընկերությունների որոշ ղեկավարների, հնարավոր է, ոգևորում են ԵՄ խիստ տուժած երկրների օրինակները, որոնք աստիճանաբար թուլացնում են սահմանափակումներն ու բացում տնտեսության առանձին ճյուղերը: Հնարավոր է, որ ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները նույնպես լավատեսության հիմք են գտնում տնտեսության խթանման համար հատկացվող միջոցների աճող ծավալում: ԵՄ երկրների առաջնորդներն ապրիլի 23-ին պայմանավորվել են ստեղծել 1 տրիլիոն եվրոյի չափով եվրոպական տնտեսության վերականգնման հիմնադրամ (1,1 տրիլիոն ԱՄՆ դոլար) (միջոցառումների փաթեթի կոնկրետ մանրամասները պետք է քննարկվեն մայիսի կեսին), իսկ շատ երկրներ հայտարարել են օգնության սեփական ծրագրերի և հարկային արտոնությունների մասին:

Չնայած հարցման մասնակիցների զգալի մասն այն կարծիքին է, որ բնականոն գործունեության հասնելը բավական մոտ է, ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները հաստատում են, որ համաշխարհային տնտեսությունը հայտնվել է շատ ծանր վիճակում և նրա առջև շատ լուրջ խնդիրներ են ծառացած: Ապրիլի կեսին ԱՄՆ-ի (Արժույթի միջազգային հիմնադրամ) 2020թ. -ին կանխատեսել է համաշխարհային տնտեսության 3% անկում, ինչը կնշանակի ամենամեծ տնտեսական անկումը «Մեծ դեպրեսիայի» ժամանակներից ի վեր: Համաշխարհային Բանկը հաշվետվություն է հրապարակել սպառողական շուկայում ցնցումներ մասին՝ նշելով, որ ամենալուրջ ռիսկերը նկատվում են նավթի և պարենային ապրանքների մատակարարման շուկայում: Այս և այլ ցուցանիշներն արտացոլվում են ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների պատասխաններում և 70%-ը կանխատեսում է Էական ազդեցություն իրենց բիզնեսի վրա: Ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները նաև մտահոգված են, թե ինչպես պետք է ներկայացնեն իրենց մտավախությունները բաժնետերերին: Մեծամասնությունը (56%) ծրագրում է ներառել կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած համավարակի վերաբերյալ պարբերություն իրենց ֆինանսական հաշվետվություններում: Ընդ որում, հարցման մասնակիցների շրջանում առաջատարներն են Պորտուգալիայի (78%) և Կիպրոսի (76%) ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները: Հայաստանում ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները նույնպես որոշել են իրենց ֆինանսական հաշվետվություններում ներառել COVID-19 համավարակի հետ կապված իրավիճակի վերլուծությունը (40%):


Հարց 9Բ: Ձեր առաջիկա ո՞ր արտաքին հաշվետվությունում եք նախատեսում ընդգրկել COVID-19-ի ազդեցության վերաբերյալ բացահայտումներ:



Ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում անհանգստությունների աստիճանը զգալիորեն տարբերվում է կախված երկրից, ընդ որում, հստակ բաժանում է նկատվում նրանց միջև, ում նախկինի պես մտահոգում է ճգնաժամի հնարավոր լուրջ ազդեցությունը բիզնեսի վրա, և նրանց, ովքեր կարծում են, որ իրավիճակը գնալով ավելի քիչ է լարվում: Համաշխարհային ցուցանիշի համեմատությամբ ընկերությունների ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում հարցվածների անհանգստության աստիճանը ըստ երկրների ավելի քիչ է՝ Դանիայում (48%), Շվեյցարիայում (47%) և Գերմանիայում (44%):

Գերմանիայում, չնայած երկրորդ եռամսյակում (ապրիլից հունիս) տնտեսության անկման 10%-ի կանխատեսումներին, ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները լավատեսորեն են տրամադրված, հնարավոր է, ներդրումների մեծ ծավալի շնորհիվ, որոնք երկրի կառավարությունը հատկացնում է ճգնաժամից հետո տնտեսության վերականգնմանը, կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված հիվանդների արդյունավետ բուժմանը, ինչպես նաև անվտանգության խիստ միջոցներին, ներառյալ հիվանդությունների մոնիտորինգն ու բուժումը:

Ստեղծված իրավիճակով մտահոգված հարցվածների մեծամասնությունը հանդիսանում են մանրածախ առևտրի և սպառողական ապրանքների արտադրության ոլորտում գործող ընկերությունների ֆինանսական տնօրեններ և ղեկավարներ (75%), ինչը կապված է մանրածախ խանութների զանգվածային փակման հետ, մինչդեռ ավելի ու ավելի շատ սպառողներ ստիպված են մնալ տանը, իսկ նրանց տնօրինվող եկամուտները կարող են կտրուկ կրճատվել (58%-ը մանրածախ առևտրի և սպառողական ապրանքների արտադրությամբ զբաղվող ընկերությունների ֆինանսական տնօրեններ և ղեկավարներ նաև նշել են սպառողական վստահության ցուցանիշի անկում, ինչի արդյունքում նվազելում է սպառումը՝ դառնալով մտահոգության ամենամեծ պատճառը):



Ի՞նչն է առավել մտահոգիչ: Համաշխարհային տնտեսական անկում և ֆինանսական ցուցանիշներ:

Ֆինանսական տնօրենների և ղեկավարների համար առավել անհանգստացնող է համաշխարհային տնտեսական անկումը (69%) և գործունեության ֆինանսական ցուցանիշների վրա ազդեցությունը (67%): Այն երկրներում, որտեղ ընդհանուր մտավախությունն ավելի ցածր մակարդակի է (օրինակ՝ Դանիա, Շվեյցարիա), ֆինանսական տնօրենները և ղեկավարներն առավել անհանգստանում են տնտեսական անկումից, չնայած նրանք վստահ են իրենց ընկերությունների վերականգնման հեռանկարների վրա, նրանք դեռևս անհանգստացած են թե ինչպես կարող է համաշխարհային տնտեսական անկումն ազդել իրենց գործունեության վրա: Տարբեր երկրներում ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները նշում են տարբեր կոնկրետ խնդիրներ, որոնք առավել անհանգստություն են առաջացնում: Թուրքիայում (80%), Մեքսիկա (80%) և ԱՄՆ (71%): Միևնույն Պորտուգալիայում (69%), Կիպրոսում (58%), Բրազիլիայում (57%) և Հայաստանում (40%) ավելի կենտրոնացած են սպառողական վստահության նվազման վրա: Չարմանալի չէ, որ ֆինանսական հատվածում ֆինանսական տնօրենները և ղեկավարները հավանաբար մտահոգված են տնտեսական անկմամբ (74%) և ֆինանսական հետևանքներով (72%):


Հարց 10. Որո՞նք են COVID-19-ի հետ կապված ձեր առաջին երեք մտավախությունները:



Ֆինանսական տնօրենների և ղեկավարների մեծամասնությունը (80%) բոլոր այն երկրներում որտեղ անցկացվել են հարցումներն ակնկալում են հասույթի և շահույթի նվազում: Ամենամեծ հոռետեսությունը նկատվել է Իռլանդիայում, որտեղ հարցվածների 98%-ը ճգնաժամի հետևանքով ակնկալում են ցուցանիշների անկում: Նույնիսկ առավել լավատես երկրներում համոզված են, որ կորոնավիրուսային համավարակի արդյունքում կնվազի իրենց հասույթը: Շվեյցարիայում (80%), Դանիայում (73%), Գերմանիայում (66%) և Հայաստանում (60%) գործող ընկերությունների ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները ակնկալում են եկամուտների անկում: Առավելապես բարձր է հասույթի անկման սպասելիքները ֆինանսական (86%), արտադրական և ավտոմատացման (86%), մանրածախ առևտրի ու սպառողական հատվածի (80%) ոլորտներում:

Ծախսերի զսպում՝ ամենատարածված միջոցն է բոլոր այն երկրներում, որտեղ իրականացվել է հարցումը: Ֆինանսական տնօրենների և ընկերությունների ղեկավարների 82% պատասխանել են, որ իրենք այդ միջոցը դիտարկում են կորոնավիրուսային համավարակի հետ կապված: Այնուամենայնիվ, միայն 20%-ն է հավաստում, որ փոփոխելու են միաձուլումների և ձեռքբերումների ռազմավարությունը: Ընդհանուր առմամբ, տարբեր երկրների ֆինանսական տնօրենների և ընկերությունների ղեկավարների 40%-ը նշում է, որ կորոնավիրուսային համավարակը ազդեցություն չունի իրենց միաձուլումների և ձեռքբերումների վրա, և 11%-ը պնդում է, որ նրանք մտադիր են ակտիվացնել միաձուլումներն ու ձեռքբերումները: Ֆինանսական տնօրենների և ղեկավարների ըմբռնումը կապված միաձուլումների և ձեռքբերումների հետ տարբերվում է ըստ երկրների:

Հարց 4. Դուք նշեցիք, որ ձեր ընկերությունը քննարկում է COVID-19-ի արդյունքում հետաձգել կամ չեղարկել պլանավորված ներդրումները: Հետևյալ ներդրումների տեսակներից, որոնք եք դիտարկում հետաձգել կամ չեղարկել:





Բոլոր այն երկրներում, որտեղ իրականացվել է հարցումը, այն ֆինանսական տնօրեններն ու ղեկավարները, որոնք հայտարարել են, որ նախատեսում են իրականացնել ծախսերի զսպման միջոցառումներ, ամենայն հավանականությամբ, կհետաձգեն կամ կվերացնեն կապիտալ ներդրումներ պահանջող նախագծերը: Ամենից շատ նման արձագանք եղել է Մեքսիկայից (97%) և Հայաստանից (75%): Մերձավոր Արևելքի երկրներում ֆինանսական տնօրենները և ղեկավարները նշել են, որ նրանք, ամենայն հավանականությամբ, կդիտարկեն աշխատակազմի կրճատումը (70%), և որ նրանք, ամենայն հավանականությամբ, կչեղարկեն կամ կհետաձգեն աշխատակազմի համալրումը:

Հայաստանում այս ցուցանիշը կազմում է 38%: Ոլորտային կտրվածքով ավելի ուշ ժամկետների տեղափոխումը կամ կապիտալ ներդրումների վերացումը նույնպես դիտարկվում է որպես առաջնահերթ միջոց, ընդ որում, ամենից շատ հարցվածները արդյունաբերական ապրանքների արտադրության և ավտոարդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների ֆինանսական տնօրեններն են և ղեկավարները (93%):

Կարևոր է նշել, որ ֆինանսական տնօրենների և ղեկավարների համեմատաբար փոքր տոկոսը (18%) հայտարարել է, որ մտադիր է չեղարկել կամ հետաձգել թվային փոխակերպման հետ կապված ներդրումները: Ըստ ոլորտների այն տատանվում է 24%-ից (էլեկտրաէներգետիկա, կոմունալ ծառայությունների և հանքարդյունաբերության ընկերություններ) 11% (բարձր տեխնոլոգիաներ, ՉԼՄ-ներ և հեռահաղորդակցության ոլորտի ընկերություններ): Թվային փոխակերպման հետ կապված ներդրումներից իրաժարվելու նման դժկամությունը զարմանք չի առաջացնում, քանի որ թվային վերափոխումը պետք է մեծ և կարևոր դեր խաղա հակաճնաժամային ծրագրի վերջին փուլերում, որի իրագործումը շարունակական գործընթաց է և որը ներառում է մոբիլիզացիա, կայունացում և ռազմավարության մշակում: Առավել ևս, որ կազմակերպությունները արագացնում են արտադրական հարթակներում / վայրերում գործընթացների կամ աշխատանքի այլ նոր մեթոդների ավտոմատացումը, դիտարկում են տեխնոլոգիաների ներդրումը, որոնք թույլ են տալիս աշխատատեղերում անվտանգությունն ապահովելու նպատակով հետևել, թե ում հետ է շփվել կորոնավիրուսային հիվանդությամբ մարդը, ինչպես նաև փորձում են ստեղծել ավելի ինտեգրված մատակարարման շղթաներ՝ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Ֆինանսական տնօրենների և ղեկավարների կողմից ձեռնարկված միջոցառումների մոնիտորինգ՝ փոփոխվող իրավիճակին համապատասխան

Հայաստանում և ամբողջ աշխարհում ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները սկսում են մտածել իրենց ընկերությունների ապագայի մասին, ինչպես կորոնավիրուսային համավարակի հետևանքով ստեղծված ճգնաժամի միջանկյալ փուլում, այնպես էլ դրա ավարտից հետո բնականոն պայմաններում: Նրանք պլանավորում են ռազմավարական միջոցառումներ՝ ուղղված անվտանգ աշխատավայրերի վերաբացմանը, ինչպես նաև արդյունավետ և անվտանգ մատակարարման շղթայի առկայությանը: Ընկերությունների կողմից նոր խնդրի լուծմանը զուգընթաց, որպես վերականգնման հիմնական փուլ, մենք շարունակելու ենք հետևել, թե ինչպես են ընկերությունների ֆինանսական տնօրենները և ղեկավարները վերաբերվում տեղի ունեցածին և ինչ միջոցներ են նրանք ձեռնարկում:

Հարցման մասին

2020 թ. ապրիլի 20-ից 22-ն ընկած ժամանակահատվածում PwC-ն հարցում է իրականացրել ընկերությունների 871 ֆինանսական տնօրենների և ղեկավարների շրջանում՝ հետևյալ երկրներում. Հայաստան, Ադրբեջան, Բահրեյն, Բրազիլիա, Կիպրոս, Դանիա, Եգիպտոս, Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Ծապոնիա, Հոլդանսան, Ղազախստան, Զուլվեյթ, Լիբանան, Մալթա, Մեքսիկա, Նիդերլանդներ, Օման, Զաթար, Պաղեստին, Ֆիլիպիններ, Պորտուգալիա, Սաուդյան Արաբիա, Սինգապուր, Սլովակիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թաիլանդ, Թուրքիա, ԱՄԷ, ԱՄՆ և Վիետնամ: Հարցումն իրականացվում է երկու շաբաթը մեկ՝ հետևելու հարցման մասնակիցների տրամադրությունների և նախատեսվող առաջնահերթ միջոցառումների փոփոխմանը: Շատ երկրների ընդգրկմամբ առաջին հետազոտությունն իրականացվել է 2020 թ. -ի ապրիլի 6-ից 8-ը:

PwC Արմենիայի կոնտակտները

Ալեքսեյ Ռուսանով,
գործադիր տնօրեն,
alexey.n.rusanov@pwc.com

Անժելա Մեսրոպյան,
ավագ մենեջեր,
anzhela.mesropyan@pwc.com



<https://www.pwc.com/am/en/>